ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ 1917—1920 ԹԹ.

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱՋԱԽԵՑՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախաբյակին Հայաստանում՝ Ռուսաստանի այդ հետամնաց ծայրամասում, ևս ուժեղացավ գյուղացիության պայքարը հողի համար ինչպես ընդդեմ կալվածատերերի, այնպես էլ՝ գյուղական կուլակ-ունևորների։ Հայկական գյուղում ծավալված պայքարն ուներ իր առանձնահատկությունները՝ ի տարբերություն Ռուսաստանի կենտրոնական շրջանների։ Դրանք պայմանավորված էին հայկական գյուղի առավել հետամնացությամբ։ Այստեղ բացակայում էր ուժեղ կալվածատիրական հողատիրությունը և դասակարգային խոր շերտավորումը։ Այնուամենայնիվ Հայաստանում ևս առկա էր հողային հարցը և պայքարը դրա լուծման համար։ Այդ պայքարը շարունակվեց նաև Մեծ հոկտեմբերի հաղթանակից հետո։

Ցարիզմի տապալումը չվերացրեց հողային հարցը. Ժամանակավոր կառավարությունը պաշտպանելով կալվածատերերի ու կապիտալիստների շահերը, չէր ցանկանում լուծել հարցը։ Նա 1917 թ. ապրիլի 21-ին որոշում ընդունեց հողային կոմիտեների մասին, որոնք զբաղվելու էին հողային հարցի լուծման նախապատրաստումով՝ հարցի որոշումը վերապահելով Սահմանադիր ժողովին։ Կառավարությունը նախազգուշացնում և սպառնում էր գյուղացիությանը ինքնագլուխ քայլերի չդիմել, որը «ընդհանուր քայքայում» և «մեծ դժբախտություն» կարող էր բերել երկրին[1]։ Դրանից առաջ մինիստր-նախագահ Լվովը շրջաբերական հեռագրով նահանգային իշխանություններից պահանջել էր միջոցների դիմել գյուղացիների պայքարը կանխելու համար[2]։ Էսէռների և մենշևիկների մանրբուրժուական համաձայնողական կուսակցությունները հողային հարցում ևս պաշտպանում էին կառավարության քաղաքականությունը։

Աշխատավոր գյուղացիության շահերին համապատասխանող միակ ճիշտ տեսակետը առաջադրեց բոլշևիկների կուսակցությունը։ Նրա առաջնորդ Վ. Ի. Լենինը հանդես եկավ կալվածատիրական հողերը անհապաղ բռնագրավելու, բոլոր հողերն ազգայնացնելու, դրանք չքավոր գյուղացիների ու բատրակների սովետների տնօրինությանը հանձնելու ծրագրով[3]։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները և մամուլը պրոպագանդում էին կուսակցության ծրագիրը, պայքարում աշխատավոր գյուղացիությանը բուրժուական և մանրբուրժուական ազդեցությունից դուրս բերելու, իրենց ետևից տանելու համար։ Ագրարային հարցի մասին բանաձևում ՌՍԴԲ(բ)Կ Կովկասյան երկրային համագումարը (1917 թ. հոկտեմբեր), ելնելով կուսակցության ապրիլյան կոնֆերանսի որոշումներից, Վ. Ի. Լենինի դրույթներից և մերկացնելով Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը, նշում էր, որ հողային հարցը կարող է լուծվել միայն իշխանությունը բանվորների, զինվորների և գյուղացիների սովետներին անցնելով[4]։

---

1 Տե՛ս «Революционные движения в России в апреле 1917 г. Апрельский кризис. Документы и материалы», М., 1958, с. 317.

2 Տե՛ս նույն տեղում, էջ 310։

3 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ, հ. 31, էջ 139։

4 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում։ Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Երևան, 1960, էջ 84—85։

Հայաստանում ևս իշխանության նորաստեղծ տեղական օրգաններում նստած էին բուրժուազիայի և կալվածատերերի շահերի պաշտպանները։ Գյուղացիական դեմոկրատական կազմակերպություններում մեծամասնություն էին կազմում համաձայնողական էսէռներն ու մենշևիկները և դաշնակցականների բուրժուաազգայնական կուսակցության ներկայացուցիչները, կուսակցություն, որը ագրարային հարցում պաշտպանում էր էսէռական սոցիալիզացիայի ծրագիրը։ Հենց այդպիսի բովանդակությամբ որոշումներ ընդունեցին 1917 թ. կեսերին գյուղացիական գավառային ու Երևանի նահանգային համագումարները[5] (վերջինում ոչ բոլշևիկյան տեսակետների քննադատությամբ ելույթ ունեցավ Պողոս Մակինցյանը), Ալեքսանդրապոլի կայազորի գյուղացիական դեպուտատների սովետի ընդհանուր ժողովը[6]։ Գյուղացիական դեպուտատների Անդրկովկասյան համագումարում ևս դաշնակցականները հանդես եկան սոցիալիզացիայի տեսակետով, չնայած համագումարն ընդունեց մունիցիպալիզացիայի ծրագիրը, որը պաշտպանում էին մենշևիկները և մուսավաթականները[7]։ Ըստ էության նրանք բոլորը միասնական էին բոլշևիկների կուսակցության դեմ պայքարում և նպաստում էին բուրժուական կառավարության քաղաքականության կենսագործմանը։

Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (Անդրհատկոմ) դիմեց նահանգային, գավառային և մարզային իշխանության մարմիններին՝ խստությամբ հետևել հողային կարգի պահպանությանը, թույլ չտալ, որ հողատերերը զրկվեն իրենց ազատությունից և իրավունքներից, որ հարկավոր է օրենքի ամբողջ ուժով դադարեցնել բռնություններն ու կողոպուտը[8]։ Անդրհատկոմի այսպիսի զգուշացումը և հենց իրական փաստերը վկայում են, որ երկրամասում ծավալվել էր հողատերերին իրենց իրավունքներից զրկելու համար պայքարը։ Դա ընդգրկել էր նաև Երևանի նահանգը։ Ցարիզմի տապալումից հետո գյուղում զարգացող պայքարի բնույթը հասկանալու համար նշենք, թե ագրարային հարաբերությունների ինչպիսի պատկեր գոյություն ուներ տվյալ ժամանակաշրջանում Երևանի նահանգում։ Հողի մեծագույն մասը պատկանում էր պետությանը։ Համապատասխանաբար գյուղացիության մեծ մասը, որ կոչվում էին պետական գյուղացիներ, բնակվում էր պետական հողերի վրա։ Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո պետականացվեցին ուդելային (ցարական ընտանիքի անդամներին պատկանող) հողերը։ Պետական ազատ ֆոնդի հողերը գյուղացիությունն օգտագործում էր վարձակալության միջոցով։ Համեմատաբար փոքր տեսակարար կշիռ ունեին նախկին մուլքադարական և թիուլային գյուղերը՝ հողային հարաբերությունների մի կատեգորիա, որը վերացվել էր 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով։ Տվյալ խմբի գյուղացիները գեռ երկար տարիներ շարունակելու էին վճարել իրենց ազատության փրկագինը։ Հեղափոխության հաղթանակից հետո միայն դադարեցվեց փրկավճարների գանձումը։ Անդրկովկասում դրա վերացումը կատարվեց 1918 թ. հունվարի 1-ին Անդրկովկասյան կոմիսարիատի որոշմամբ։ Թույլ էր զարգացած հողի մասնավոր սեփականությունը։ Ամենախոշոր սեփականատերը էջմիածնի վանքն էր, որին հաջորդում էին ոչ մեծաքանակ մեծ ու փոքր կալվածատերերը, ապա մեշիդները և հատուկենտ գյուղացիական տնտեսությունները։ Ռուսական նորաստեղծ բուրժուական պետությունը հիմնականում պահպանում էր ցարական ժամանակների ագրարային հարաբերությունները, հողի համար պայքար մղող գյուղացիությանը խոստումներ տալով, թե հարկավոր է սպասել Սահմանադիր ժողովին։ Իսկ գյուղացիությունը չէր ցանկանում սպասել։

Անդրհատկոմի Երևանի նահանգի ներկայացուցիչ Մ. Սեիդովը 1917 թ.

---

5 Տե՛ս «Հորիզոն», 1. VI. 1917, 9. VI. 1917, 5. VII. 1917։

6 Տե՛ս ЦГИА Груз.ССР, ф. 1841, оп. 2, д. 3, л. 9.

7 Տե՛ս «Հորիզոն», 6. VII. 1917։

8 Տե՛ս «Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы», Тбилиси, 1958, с. 20—21.

հունիսի 5-ին կոմիտեին հղած գրության մեջ հայտնում էր, որ նահանգի մի շարք գավառներից ամեն օր լուրեր են ստացվում հողային գրավումների ու կողոպուտի մասին, և որ այդ հողի վրա բնակչության մեջ տեղի են ունենում ընդհարումներ, երբեմն՝ զինված։ Նման երևույթը նա բացատրում էր տեղերում ուժեղ և վճռական իշխանության բացակայությամբ ու առաջարկում էր դիմել համապատասխան միջոցների, հակառակ դեպքում, եզրակացնում էր նա, «կարող է վրա հասնել լրիվ անիշխանությունը»[9]։ Նույն թվականի հունիսի 19-ին Երևանի նահանգի կոմիսարիատը Անդրհատկոմին տեղեկացնում էր, որ իր տրամադրության տակ եղած զինվորական ուժերով չի կարողանում կանխել կալվածքների ավերումները ամբողջ գավառում, այդ թվում Ծատուրովների կալվածքում, և որ այնուամենայնիվ ինքը բոլոր միջոցները կձեռնարկի այդ «ցավալի երևույթներին» վերջ տալու համար[10]։

Խոսելով Անդրկովկասի, մասնավորապես նրա հարավային և արևելյան նահանգների չքավոր գյուղացիությանը կազմակերպական օգնություն ցույց տալու խնդիրների մասին, կուսակցական ակտիվ գործիչ Ա. Մռավյանը «Պայքար» թերթի 1917 թ. մայիսի 17-ի համարում գրել է, որ գյուղացիությունը սկսել է ստեղծել իր զուտ դասակարգային, դեմոկրատական պայքարի միություններն ու կոմիտեները, որ մի շարք վայրերում նկատվում է ագրարային շարժում, որը հետզհետե խորանում ու լայնանում է և հիմք կա ենթադրելու, որ մոտիկ ապագայում մեր գյուղերը կխոսեն «չլսված լեզվով»[11]։

Հայաստանում հողային հարցի շուրջը բորբոքված պայքարի հիմնական ձևերն էին կալվածատիրական և վանքապատկան հողերին տիրելը, պետական հողերի գրավումը, հողահավասարեցման պահանջը, որն ուղղված էր նաև կուլակների դեմ։

Էջմիածնի վանքին պատկանող Գյոկքիլիսա գյուղի 138 դեսյատին հողի վարձակալ երեք գյուղացի, որոնք կարող էին լինել միայն ունևոր-կուլակային տնտեսատերեր, նահանգային իշխանություններին բողոքում էին, որ գյուղի հասարակությունը փետրվարյան հեղաշրջումից անմիջապես հետո, 1917 թ. մարտ ամսին, իրենց հեռացրել է և տիրել հողերին ու սպառնում է իրենց կյանքին, եթե համարձակվեն հավակնել սեփականատիրոջ իրավունքների վերականգնման վրա։ Վարձակալները բազմիցս դիմել էին նահանգային կոմիսարիատին, բայց ոչինչ չէր օգնել։ Վարձակալները հույս էին հայտնում, որ իշխանությունները կօգնեն իրենց, որը և, նրանց կարծիքով, երաշխիք կծառայեր նահանգում հանգստություն հաստատելու համար[12]։ Սակայն նրանց հույսերը չիրականացան, գյուղացիները թույլ չտվեցին հավաքել բերքը[13]։

Վեճ գոյություն ուներ Էջմիածնի վանքի և գյուղացիների միջև Էջմիածնում գտնվող այգու շուրջը։ Գյուղացիները այն համարում էին իրենցը, ուստի հեղափոխությունից հետո նրանք քանդեցին այգու պատերը և տիրեցին այն։ Երկար ժամանակ վանքը գրագրություն էր պահպանում Երևանի և Թիֆլիսի իշխանությունների հետ, խնդրելով պաշտպանել իր իրավունքները, վերականգնել տալ այգու ցանկապատը[14]։ Օգոստոսի 9-ին գավառային կոմիսարը Երևանի պարետ Արշավիր Շախաթունին հեռագրով հայտնում էր, որ գյուղացիները հաստատապես պնդում են, որ այգին պատկանում է իրենց և պահանջում են վեճը փոխադրել դատարան, և որ արյունահեղությունից խուսափելու համար ինքը ժամանակավորապես դադարեցրել է ցանկապատի վերականգնման աշխատանքները ու խնդրում է հետագա ցուցումներ[15]։ Ընդ որում

---

9 Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1022, ց. 9, գ. 517, թ. 14—15։

10 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 103, ց. 1, գ. 59, թ. 11։

11 Տե՛ս Ա. Մռավյան, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1961, էջ 47—49։

12 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան...», էջ 40—41։

13 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 103, ց. 1, գ. 57, թ. 40։

14 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան...», էջ 58, 62—63, 65—66։

15 Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 868, թ. 12։

Երևանի պարետը Անդրհատակոմից իրավունք էր ստացել «մեղավոր անձանց բանտարկելու, ենթարկելու պատասխանատվության, վերականգնելու վանքի իրավունքները, հավասարապես նաև անհրաժեշտ միջոցների դիմելու անկարգությունները կանխելու համար»[16]։

Աղամոալու և Թոխանշալու գյուղերի բնակիչները գրավել և վարուցանք էին կատարում Ղոյլասարի այսորական եկեղեցու հողերում, որ նրան էր հատկացվել 1913 թ.։ Եկեղեցու սպասավորները դիմել էին Երևանի նահանգային կոմիսարիատին և խնդրել եկեղեցին պաշտպանել գյուղացիների ինքնագլուխ գործողություններից։ 1917 թ. սեպտեմբերի 17-ին կոմիսարիատը համապատասխան կարգադրություն էր արել Երևանի գավառային իշխանությանը[17]։

Հաղում փաստաթղթեր կան նաև կալվածատերեր Ծատուրովների, Խանազյանների, Արամյանցի, Լոռիս-Մելիքովի և ուրիշների դեմ ուղղված գյուղացիական պայքարի մասին։ Ծատուրովները, ըստ այն բանկի տվյալների, որտեղ կալվածքը գրավ էր դրված, Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում տիրում էին 4896 դեսյատին տարբեր հողահանդակների (վարելահող, խոտհարք, արոտավայր, անտառ)։ 1917 թ. գարնանը Արզաքյանդի գյուղացիները հրաժարվեցին ճանաչել կալվածատիրոջ իրավունքները՝ կապալավարձի պայմանագրերը, բաժանեցին հողերը միմյանց միջև և սկսեցին վարուցանք կատարել։ Հետագայում բաժանեցին նաև նրանց ցանքատարածությունները, ինչպես նաև խոտհարքները, օգտվում էին անտառի բարիքներից։ Ծատուրովները, նրանց կառավարիչը հեռագրերով ու դիմումներով հեղեղեցին գավառի, նահանգի ու երկրամասի իշխանությունները, խնդրելով օգնություն։ Առաջին իսկ հեռագրին հաջորդեց Անդրհատակոմի անդամ Պապաջանովի պատասխանը՝ հեռագրելով Երևանի նահանգային գործադիր կոմիտեին՝ դիմել միջոցների Ծատուրովների Արզաքյանդ-Դալար կալվածքի անկարգություններին վերջ տալու համար[18]։ Անհանգստանում էր նաև Անդրկովկասյան ազնվականական հողային բանկը՝ իր և իր փոխատուի շահերի դեմ գյուղացիների հանդգնության համար[19]։ Դժգոհում էր զինվորական մասը, որը խոտհարքներ էր վարձակալել[20]։ Հուլիսի 30-ին կալվածքի կառավարիչը հայտնում էր, որ հնձել է արտը և սկսել փոխադրումը, սակայն արզաքյանդցիները, գործիքներով զինված, ուժով վռնդել են սայլապաններին և պատրաստվում են գրավել հացահատիկի խրձերը, այնուհետև ավելացնում էր, թե անխուսափելի է արյունահեղությունը և խնդրում էր իսկույն ևթ զորք ուղարկել[21]։ Մի այլ գրությամբ նա, որ արդեն փախել էր կալվածքից, ահաբեկված գրում էր, թե գյուղացիները զինված են և սպառնում են իրենց սպանել, ուստի խնդրում էր զինվորական ուժ տրամադրել, որպեսզի կարողանա վերադառնալ այնտեղ[22]։ Ախտալի գործադիր կոմիտեն նահանգի կոմիսարիատին հայտնում էր, թե «ամբողջ բնակչությունը զինված է և դիմադրություն է ցույց տալիս», ուստի խնդրում էր «ուղարկել ռազմական ուժ և անպայման կազակներ, այլապես անարխիան կծավալվի ամբողջ գավառում»[23]։

Երևանի գավառի սահմաններում գտնվող Ղորզանյանների կալվածքը գրավել և հողերը վարել էին Ողջաբերդի և Շորբուլաղի գյուղացիները[24]։ Ջառ

---

16 ЦГИА Груз ССР, ф. 2081, оп. 1, д. 628, л. 30.

17 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1977, № 2, էջ 7։

18 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 103, ց. 1, գ. 59, թ. 1։

19 Տե՛ս նույն տեղում, թ. 5 և 5 հակ.։

20 Տե՛ս նույն տեղում, թ. 12։

21 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Վարար հասարակական գիտություններ», 1977, № 11, էջ 89։

22 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան...», էջ 72, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 103, ց. 1, գ. 59, թ. 22։

23 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան...», էջ 72։

24 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 103, ց. 1, գ. 57, թ. 20, 22։

գյուղի բնակիչները տիրել էին Մակաշևի և Մուշեղովների հողերին[25]։ Գյոկքիլիսայի մոտ գտնվող Միքայել Կրիկորովի վարելահողերը և խոտհարքները, ընդհանուր տարածությամբ 225 դեսյատին, գյուղացիները գրավել էին ունևոր վարձակալներից։ «Գյոկքիլիսեցիները,— գրել են վարձակալները մայիսի 10-ին,— բռնությամբ յուրացրել են հողերը և թույլ չեն տալիս օգտվել ցորենի և գարու մեր 50 դեսյատին ցանքերից և խոտհարքներից»։ Վարձակալները, որ երկրորդ անգամ էին դիմում Երևանի նահանգային գործադիր կոմիտեին, խնդրում էին վերականգնել իրենց իրավունքները և գյուղացիներից գանձել իրենց պատճառած վնասը[28]։ Շարուր— Դարալագյազի գավառում գտնվող Հ. Օհանյանի «Ղզլզշլաղ» կալվածքը գրավել էր հարևան Երտիչ գյուղի հասարակությունը, հեռացրել էր նրա ծառայողներին և ցանք կատարել[27]։

Պայքարը տևական բնույթ կրեց Միքայել Արամյանցի կալվածքում, որը Բորչալուի գավառի տարբեր վայրերում ուներ 11258 դեսյատին հող[28]։ Արամաշեն, Լեչբադին և Քեսալո գյուղերի նրա վարձակալները պահանջում էին իջեցնել վարձաչափը, որովհետև վատ բերք էին ստացել։ Գյուղացիներին օգնության եկավ Անդրհատկոմի Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի ներկայացուցիչ բոլշևիկ Սերգո Խանոյանը, ինչպես նաև Բայդար գյուղի գործկոմի նախագահ Մամեդ Ղարաբաղլի օգնին։ Վերջինիս ուղարկած գրության մեջ (1917 թ. հունիսի 8) Ս. Խանոյանը հայտնում էր, որ հեռագրով թույլատրել է ինչպես հայ, այնպես էլ մուսուլման գյուղացիներին հավաքելու իրենց բերքը, նրանց վեճին անդրադառնալով հետո[29]։ Կալվածքի կառավարիչը հուլիսի 7-ին հեռագրով Անդրհատկոմին տեղեկացնում էր, որ գյուղական կոմիտեի նախագահի կողմից հրահրված լեչբադինցիները «հրաժարվում են անասուններ բաժին հանել հողատիրոջ օգտին, որը սահմանված է օրենքով։ Սպասվում է անցանկալի ընդհարում»[30]։ Այնուհետև Բորչալուի գավառային կոմիսարը հատուկ գրություն ուղարկեց Անդրհատկոմին՝ Սերգո Խանոյանի և Մամեդ Ղարաբաղլի օգնու «հակաօրինական» գործունեության, գյուղացիների մեջ ագիտացիա անելու մասին։ Դրա հետևանքով, շարունակում է կոմիսարը, «այժմ ոչ միայն հնարավոր չէ համոզել գյուղացիներին, որ նրանք ժամանակավոր կառավարության կարգադրության համաձայն պարտավոր են կալվածատիրոջը վճարել վարձը և ընդհանրապես մինչև Սահմանադիր ժողովը ինքնագլուխ չլուծել ագրարային հարցը, այլև մուծել պետության տուրքերն ու հարկերը»[31]։ Դրանից հետո Թիֆլիսից հատուկ մարդ ուղարկվեց գավառ՝ պարզելու կալվածատիրոջ և գյուղացիների միջև ծագած վեճը։ Նա իր զեկուցագրում հայտնում էր, որ գյուղացիները պնդում են իրենց խոսքը, որ պետք է իջեցնել վարձի չափը։ «Վաղը, օգոստոսի 2-ին, —շարունակում է նա,— ես Լեչբադին եմ գործուղելու հաշտարար հանձնաժողով։ Իսկ եթե գյուղացիներն այդ ժամանակ ևս չհամաձայնվեն, ես վճռական միջոցներ եմ ձեռնարկելու, ընդհուպ մինչև պարագլուխներին օրենքով պատասխանատվության ենթարկելը»[32]։

Արամյանցի կալվածքից բացի, ագրարային շարժումն ընդգրկել էր նաև Լոռու մյուս բոլոր խոշոր տնտեսությունները։ Գյուղացիները հարձակում էին կատարել ֆոն Կուչենբախի յուղի և պանրի գործարանների վրա։ Անդրհատկոմը օգոստոսի 1-ի գրությամբ իր ներկայացուցիչներ Սարգիս Խանոյանից և Արդուրահիմ Հախվերդովից պահանջում էր հետաքննել այդ գործը, նշելով, որ «Ալի Կարա Կուրբանի գործողությունները, որը կոչ է անում զինված ուժով

25 Տե՛ս նույն տեղում, թ. 36։

26 Տե՛ս նույն տեղում, գ. 51, թ. 21։

27 Տե՛ս «Բաներեր Հայաստանի արխիվների», 1977, № 2, էջ 8։

28 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 93, ց. 1, գ. 390, թ. 1։

29 Տե՛ս ЦГИА Груз.ССР, ф. 2081, оп. I, д. 382, л. 67.

30 Նույն տեղում, թ. 27—32։

31 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 517, թ. 4։

32 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան...», էջ 63—64։

լուծել հողային հարցերը, անօրինական են, հեղափոխության գործի համար վտանգավոր և ենթակա են խիստ հետաքննության»։ Օգոստոսի 5-ի հեռագրով արգեն Լոռու կոմիսարից էր պահանջվում ամենաեռանգուն միջոցներ ձեռնարկել շրջանի պանրի և յուղի գործարանները, դրանց արոտավայրերն ու խոտհարքները ամեն տեսակ ինքնագլուխ գործողություններից պաշտպանելու համար[34]։

Ճոճկանի գյուղացիները հրաժարվում էին վճարել կոմս Լոռիս-Մելիքովի բահրան[35], և կալվածատերեր Լոռիս-Մելիքովի ու Արխաղիի կառավարիչների ու անտառապահի նկատմամբ բողոք ներկայացրին երկրամասային գյուղացիական կենտրոնին (գյուղացիական պատգամավորների Անդրկովկասյան համագումարի կողմից ընտրված գործադիր մարմին), որի կապակցությամբ կենտրոնը հանձնարարեց իր անդամ Արամայիս Երզնկյանին (սոցիալ-դեմոկրատ) տալ անհրաժեշտ բացատրություններ և մասնակցել գործի վերջնական լուծմանը[36]։ «Բորչալուի գավառում անարխիստական ելույթները ուժեղանում են, կողոպուտներին, սպանություններին, արոտավայրերի հափշտակություններին հաշիվ չկա,— հեռագրել է կառավարիչ Վախտանգ Մեհրաբովը (հոկտեմբերի 23-ին)։ —Նույնիսկ հեղափոխության շահերը պահանջում են վճռական միջոցառումներ։ Օգտվելով անկարգություններից, հողի վարձակալները ինձ՝ կոմս Լոռիս-Մելիքովի հավատարմատարիս, չեն վճարում, դիմադրում են։ Իշխանություններն անզոր են։ Միայն Ճոճկանը 30 հազար ռուբլու խուրձ է տարել»[37]։

Գյուղացիները գրավում և բաժանում էին նաև պետական հասութաբեր հողվածները, որոնք մեծի մասամբ վարձակալության էին տրվում ունևոր և կուլակային տնտեսություններին։ Այս դեպքում փաստորեն պայքար էր գնում մի կողմից աշխատավոր գյուղացիության, մյուս կողմից իշխանությունների ու գյուղական շահագործողների միջև։ Ռնդամալ գյուղում հողազուրկ և սակավահող գյուղացիները 1917 թ. ապրիլին բաժանեցին «Ռնդամալ գյուղի ջրաղացի հողամաս» անվանյալ պետական բահրային հողը[38]։ Նույն ձևով վարվեցին Երևանի գավառի Կայախարաբա գյուղի բնակիչները «Կյուլմակ» կամ «Սալման օղլի» հողերի նկատմամբ[39]։ Նորագավիթ գյուղի երկու բնակիչ զավթել էին Սոֆիա Ալեքսանովայի վարձակալած պետական հողը[40]։

Կազմակերպվածության տեսակետից աչքի է ընկնում Շան-Գիրեյի (Ղռերի) և Արազդայանի կալվածքների աշխատավորների պայքարը։ Շան-Գիրեյի տնտեսությունը պատկանում էր Քսենիա Միխայլովնա Դեդովային և գտնվում էր Բաշ-Նորաշենից ոչ հեռու։ Այստեղ կազմակերպվել էր բանվորական կոմիտե, որը մշակեց և սեպտեմբերի 21-ին տիրոջը ներկայացրեց պահանջագիր, ուր մտցված էին և տնտեսական, և քաղաքական պահանջներ։ Սահմանվում էր 8-ժամյա բանվորական օր, բացառությամբ առանձին երկարօրյա գյուղատնտեսական աշխատանքների, բարձրացվում էր աշխատավարձը, թույլատրվում էին գործադուլները, աշխատավարձի պահպանումով և այլն[41]։ Ինչպես երևում է, տնտեսության տերը համաձայնել էր ներկայացված պահանջներին, որովհետև 20 օր անց (հոկտեմբերի 10-ին) արդեն պահանջագիրը ստորագրվել էր (փոքր փոփոխությամբ)։ Դա փաստորեն պայմանագիր էր՝ ստորագրված Ք. Մ. Դե-

---

33 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 517, թ. 8։

34 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան...», էջ 65—66։

35 Տե՛ս նույն տեղում, էջ 62։

36 Տե՛ս ЦГИА Груз.ССР, ф. 1841, оп. 2, д. 23, л. 4.

37 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան...», էջ 97։

38 Տե՛ս նույն տեղում, էջ 36։

39 Տե՛ս նույն տեղում, էջ 36—37։

40 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 103, ց. 1, գ. 57, թ. 16։

41 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան...», էջ 75—76։

դովայի, Շան-Գիրեյ կալվածքի բանվորական գործադիր կոմիտեի (նրա 6 անդամների) և Երևանի բանվորների ու զինվորների պատգամավորների սովետի գործադիր կոմիտեի (նրա 4 պատգամավորների) կողմից[42]։

Մայիսի 28-ին կայացած Արազդայան-Շերեմետև բաժնետիրական ընկերության ոռոգման բաժնի 103 ծառայողների ժողովը դիմեց տեղի բնակչությանը՝ համաձայնվելու, որ ընկերության վարչությունից տնտեսական և քաղաքական զիջումներ ստանալու նպատակով կալվածքի ընդհանուր կոմիտեի կազմի մեջ իրենց կողմից առաջադրվեն 3 անդամ, 3 անդամության թեկնածու և 5 անդամ վարձակալ գյուղացիներից։ «Եթե դուք, ազատ քաղաքացիներդ,— կարդում ենք դիմումում,— համաձայն եք միավորվելու, ապա մենք կենթարկվենք ընդհանուր միացյալ կոմիտեին։ Եթե բացասական պատասխան ստանանք ձեզանից, ապա կկազմակերպվենք առանձին և ձեր կոմիտեի որոշումը մեզ համար պարտադիր չի լինի»[43]։ Մենք չգիտենք, թե ինչ ելք է ունեցել այս դիմումը, սակայն հայտնի է, որ կալվածքի բանվորների և ծառայողների ընդհանուր կոմիտեն, նրա ժողովը գործել է բավական վճռականորեն, 1917 թ. նոյեմբերի 12-ին իր պահանջները ներկայացնելով ընկերության վարչությանը[44]։ 15 կետից բաղկացած պահանջագրում կան տնտեսական ու քաղաքական բովանդակությամբ կետեր, որոնք նման են «Շան-Գիրեյի» պահանջագիր-պայմանագրին։ Այն ստորագրել է ժողովի նախագահը և դարձյալ մեզ հայտնի չէ նոա արդյունքը։ Տվյալ դեպքում կարևորն այն է, որ գյուղատնտեսական տվյալ ձեռնարկության մեջ աշխատող հարյուրավոր բանվորներ ու ծառայողներ տրամադրված էին բավական մարտականորեն և գործել են հետևողական կերպով։

Երևանի նահանգային գործադիր կոմիտեին հասցեագրված օգոստոսի 24-ի գրությամբ նույն ընկերության վարչությունը հայտնում էր կալվածքի և նրա վարձակալների իրավունքները գյուղացիների կողմից խախտելու մասին և խնդրում էր օգնություն ցույց տալ։ Հատկապես ակտիվ էին գործել հարևան Դավալու գյուղի գյուղացիները, որոնք վարել էին ընկերության հողերը, հնձել և փոխադրել խոտը[45]։ Չորս օր անց վարչությունը նույն հասցեով լրացուցիչ տեղեկացնում էր Արազդայան, Իսպահան և Սմոքենդ գյուղերի վարձակալների կողմից հացահատիկի բերքը յուրացնելու մասին[46]։

Ամփոփելով 1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո Հայաստանում ծավալված ագրարային ելույթները, կարող ենք նշել, որ դրանք շատ դեպքերում կրել են տարերային, անկազմակերպ բնույթ (դրա արտահայտությունն էր նաև առանձին դեպքերում գյուղացիների կողմից կալվածատիրական, վանքապատկան ու պետական անտառների հատումը, որոնց վերաբերյալ օրինակներ չբերեցինք, սակայն դա փաստ է)։ Բայց կարևորն այն է, որ գյուղում բարձրացել էր հեղափոխական տրամադրությունը և նախադրյալներ էին հասունանում աշխատավոր գյուղացիությանը կազմակերպելու և կալվածատերերի ու կապիտալիստների շահերը արտահայտող ժամանակավոր կառավարության դեմ հակադրելու, որպես բանվոր դասակարգի դաշնակցի, սոցիալիստական հեղափոխության մեջ ներգրավելու համար։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո Անդրկովկասում, ուր սովետական իշխանության հաղթանակը ձգձգվեց մինչև 1920—1921 թթ., ստեղծվեց քաղաքական նոր իրադրություն։ Ժամանակավոր բուրժուական կառավարության մարմին Անդրկովկասյան հատուկ

---

42 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 11, էջ 89—91։

43 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան...», էջ 39։

44 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 11, էջ 91—93։

45 Տե՛ս «Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении. Сборник документов и материалов», Ереван, 1957, с. 66—67.

46 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 103, ց. 1, գ. 89, թ. 164։

կոմիտեին փոխարինեց Անդրկովկասյան կոմիսարիատը, վերջինիս՝ Անդրկովկասյան սեյմը, իսկ 1918 թ. մայիսին ստեղծվեցին Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ազգային բուրժուական հանրապետությունները։ Դրանք բոլորն էլ շահագործող դասակարգերի իշխանություն էին։ Ագրարային հարցի բնագավառում ևս դրանք վարում էին կալվածատերերի և կուլակների շահերից բխող քաղաքականություն։ Այնուամենայնիվ դրանք չէին կարող հաշվի չառնել այն արմատական վերափոխումները, որ առաջ եկան Սովետական Ռուսաստանում, հողի մասին լենինյան դեկրետի ընդունման և կենսագործման շնորհիվ, ինչպես նաև երկրամասում զարգացող հեղափոխական շուրժումները։

1917 թ. դեկտեմբերի 16-ին Անդրկովկասյան կոմիսարիատն ընդունեց «Արքունական (նախկին ուդելային), եկեղեցական, վանքապատկան, իրավաբանական անձնավորությունների և մասնավոր կալվածատերերի հողերը հողային կոմիտեներին հանձնելու մասին կանոնադրությունը»[47]։ Որոշ նորմայից ավելի լինելու դեպքում հիշյալ կատեգորիայի հողերը վերցվում էին նրանց տերերից և հանձնվում հողային կոմիտեներին, ստեղծելով երկրամասային հողային ֆոնդ։ Այդ ֆոնդից հող էին ստանալու կարիքավոր գյուղացիները։ Պահպանվում էր հողի մասնավոր սեփականությունը, պաշտպանվում էին կալվածատերերի շահերը։ Դա փաստորեն հողի մունիցիպալիզացիայի մենշևիկյան ծրագիրն էր, որն ընդունվել էր Անդրկովկասյան գյուղացիական համագումարում։ Հողը չէր ազգայնացվում, որի դեպքում միայն կվերացվեին ագրարային հարաբերություններում գոյություն ունեցող հին կարգերը և բազա կստեղծվեր գյուղում արտադրողական ուժերի զարգացման համար։ Հողատերերին թողնվող նորմաները որոշվեցին Անդրկովկասյան սեյմի 1918 թ. մարտի 7-ի օրենքով («Օրենք հողատերերին թողնվելիք հողաբաժինների չափը որոշելու և հողային ռեֆորմը կենսագործելու միջոցառումների մասին»)[48]։

Գյուղական բնակչությանն ուղղված հատուկ դիմումի մեջ Անդրկովկասի հողային կոմիտեն կոչ էր անում ամեն միջոց ձեռք առնել, որ չկատարվեն հողերը զավթելու ինքնագլուխ գործողություններ, «ռուսաց հողային կոմիտեների վճռի չձեռնարկել՝ օգտվելու մասնատիրական և այլ հողերից, որ չեն գտնվում գյուղացիների տրամադրության տակ» և սպասել մինչև հողային կոմիտեները կկատարեն իրենց պարտականությունները[49]։

Պետք է նկատել, որ հողային կոմիտեները, որոնց կազմում ընդգրկված էին ունևոր դասերի ներկայացուցիչներ, մասնավորապես Հայաստանում խիստ դանդաղ և անբավարար էին կատարում իրենց պարտականությունները։ Նույնիսկ դաշնակցականների կառավարությունը դժգոհ էր նրանց գործունեությունից և, ինչպես կտեսնենք, 1920 թ. ստեղծեց հողային նոր մարմիններ։

Իշխանությունները շտապեցնում էին հողային կոմիտեներին՝ արագացնել ռեֆորմի կենսագործումը, կանխած լինելու համար գյուղացիական շարժումը։ Սակայն շարժումը շարունակվում էր։ Այսպես, 1919 թ. մայիսի 27-ին դաշնակցականների կառավարության գյուղատնտեսության և պետական գույքերի գլխավոր վարչությունը ներքին գործերի մինիստրությանը հայտնում էր, թե հողագործ-սեփականատերերից լուրեր են ստացվում իրենց հողերը ռեֆորմի կենսագործմանը չսպասող գյուղական համայնքների կողմից զավթելու մասին։ Կոմիտեն խնդրում էր խստորեն հետևել և թույլ չտալ ինչպես մասնատիրական, այնպես էլ պետական ու հասարակական կազմակերպությունների հողերի ինքնագլուխ գրավումները[50]։ Մինիստրությունը պատասխանեց, թե հարկավոր է արագացնել հողային կոմիտեների ստեղծումը, և զգուշացնել գյուղացիներին, որ անօրինական գործողությունների համար նրանք կենթարկվեն պատասխա-

---

47 Տե՛ս «Земельные законы Закавказского правительства», Тифлис, 1918, с. 14—17.

48 Տե՛ս նույն տեղում, էջ 18—20։

49 Տե՛ս «Մշակ», 23. I. 1918։

50 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 515, թ. 3։

նատվության[51]։ Նույն թվականի վերջերին գլխավոր հողային կոմիտեն Ալեքսանդրապոլի գավառի հողային կոմիտեին գրում էր, թե քանի որ գավառում հողային հարցի շուրջը ընդհարումներ են տեղի ունենում գյուղացիների և կալվածատերերի միջև, ուստի հարկավոր է շտապեցնել կալվածների ընդունելությունը կոմիտեների կողմից[52]։ Ներքին գործերի մինիստրությունը նոյեմբերի 30-ի գրությամբ զարմանք էր հայտնում հողային կոմիտեների դանդաղաշարժության համար, որը, ըստ նրա, գյուղացիներին ինքնագլուխ զավթումների առիթ էր տալիս[53]։

1918—1920 թթ. առանձին վայրերում շարունակվում էին 1917 թ. ծավալված շարժումները, մի շարք այլ վայրերում հանդես եկան շարժման նոր օջախներ, ինչպես նաև դրսևորվեցին պայքարի այլ ուղղություններ կամ բնագավառներ (աշխատավոր գյուղացիության պայքարը հողաբաժանության կամ վերաբաժանության համար և այլն)։ Չէին դադարել գյուղացիների հարձակումները Արամյանցի կալվածքի և Լոռու մյուս տնտեսությունների վրա։ Ընդհանրապես Լոռում, որը տվյալ ժամանակաշրջանում գտնվում էր Թիֆլիսի նահանգի, ապա Վրաստանի կազմում, հեղափոխական պայքարն ավելի մեծ ուժ ուներ, քան Հայաստանի այլ շրջաններում։ Այստեղ կալվածատիրական հողատիրությունն էլ մեծ տարածում ուներ, գոյություն ունեին բոլշևիկյան ուժեղ կազմակերպություններ։ Շրջանը սերտ կապերի մեջ էր Թիֆլիսի հետ, որը Անդրկովկասի հեղափոխական շարժման կենտրոններից էր։

1918 թ. հունվարի 9-ին Հաղպատում տեղի ունեցավ բոլշևիկների ժողով, որին համակրողների հետ միասին մասնակցեց 200 մարդ։ Ընթացիկ դրության մասին զեկուցող Ա. Երիցյանը քննադատեց Անդրկովկասյան կոմիսարիատի՝ մենշևիկյան-աջէսէռական-դաշնակցական-բեկական բլոկի հակահեղափոխական գործունեությունը, այն նույնացնելով Կերենսկու բուրժուակալվածատիրական կառավարության հետ։ Ժողովը որոշեց ճանաչել սովետների իշխանությունը հանձին Սովետական Ռուսաստանի ժողկոմխորհի, որը միայն կարող էր լուծել հողային հարցը չքավոր գյուղացիության օգտին։ «Հանուն սոցիալիստական հեղափոխության շահերի,— ասված է որոշման մեջ,— ամբողջ իշխանությունը պետք է հանձնվի սովետներին, իշխանություն, որն անխնա պայքար կմղի հակահեղափոխական տարրերի, բեկերի, աղալարների, խանների և կալվածատերերի դեմ»[54]։ Գյուղացիության հեղափոխական տրամադրության վրա դրական ազդեցություն ունեցան մասնավորապես 1919 թ. դեկտեմբերին և 1920 թ. ապրիլին Ուզունլարում կայացած Լոռու գյուղացիական պատգամավորների խորհրդի 1-ին և 2-րդ համագումարները, որոնց մասնակցում էին համապատասխանաբար 50 և 44 գյուղերի ներկայացուցիչներ[55]։ Ճիշտ է, համագումարների դպրոցական կազմը միատարր չէր, այնուամենայնիվ բոլշևիկների (Ս. Երզնկյան և ուրիշներ) ձայնը բարձր էր հնչում։ Լոռվա աշխատավոր գյուղացիությունը, նշել է իր զեկուցումներից մեկում Ս. Երզնկյանը, ցանկանում է իրականացնել Ռուսաստանի մեծ հեղափոխության օրենքները և նվաճումները, վերացնել տիրող հողային կարգերը, կալվածատերերի արտոնությունները։ Համագումարը, շարունակում է նա, «պետք է իրականացնի Ռուսաստանի հեղափոխության օրենքը, որի համար բանվորներն ու գյուղացիները այնքան արյուն են թափել։ Հեղափոխության օրենքն է՝ հողը աշխատավոր գյուղացունն է, հողը այդ հողի վրա քրտնողինն է»։

---

51 Տե՛ս նույն տեղում, թ. 2։

52 Տե՛ս նույն տեղում, ֆ. 203, ց. 1, գ. 753, թ. 34։

53 Տե՛ս նույն տեղում, թ. 37։

54 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ուսուցիան...», էջ 159—160։

55 Տե՛ս «Արձանագրություններ Լոռվա նեյտրալ զոնայի գյուղացիական պատգամավորների խորհրդի I», Թիֆլիս, 1921, «Արձանագրություններ Լոռվա նեյտրալ զոնայի գյուղացիական պատգամավորների խորհրդի II», Թիֆլիս, 1921։

Դեռ չէր բացվել 1918 թ. գարունը, երբ սկսվեց պայքարը Արամյանցի կալվածքի համար։ Փետրվարի 12-ին կառավարիչը հայտնում էր, որ երկու օր առաջ լեչբագինցիները սկսել են գրավել և բաժանել կալվածքի շարժական ու անշարժ գույքը, որը պաշտպանելու համար խնդրում էր զինված ուժ[56]։ Հաջորդ օրը կալվածատերը գրում էր հաղպատցիների կողմից «Ախթալա-Հաղպատ» հողերին և գույքերին տիրելու ցանկության մասին, որը նա կապում էր բոլշևիկյան ագիտացիայի հետ։ «Ինձ հասած ճիշտ տեղեկությունների համաձայն,— գրել է նա,— Հաղպատ գյուղի գյուղացիության մեջ, որտեղ ես ունեմ «Ախթալա-Հաղպատ» անունով կալվածք, մղվում է բոլշևիկյան պրոպագանդա»։ Նա Թիֆլիսի նահանգային իշխանություններին խնդրում էր դիմել արտակարգ միջոցների[57]։ Մարտի 15-ին Թիֆլիս ուղարկած հեռագրում կալվածքի կառավարիչը նշում էր շուլավերցի բոլշևիկ Երիցյանի և նրա տեղական ու Թիֆլիսեցի ընկերների կողմից գյուղերում անպատիժ շրջելու և «կործանարար ագիտացիա» մղելու մասին։ Ապա, հիշելով գյուղացիների գործողությունները, նա խնդրում էր պատժիչ ջոկատ ուղարկել Լեչբադին, բանտարկել և պատժել պարագլուխներին՝ «հեղափոխական ժամանակների կանոններով»[58]։ Եվ վերջապես մայիսի 11-ին, երկու տարբեր, բայց նույնաբովանդակ գրություններով Անդրկովկասյան հողային կոմիտեն Թիֆլիսի նահանգային հողային կոմիտեին գրում էր՝ «Ախթալա» կալվածքը, որն ունի կուլտուրական տնտեսություններ (այգի, ֆերմա և այլն) և կարող էր պետական նշանակություն ունենալ, պաշտպանել շրջակա բնակչության ինքնագլուխ զավթումներից[59]։

Նույնպիսի վճռականությամբ ու հետևողականությամբ հանդես եկան Խանաղյանների դեմ Կուրթան, Վարգաբլուր գյուղերի բնակիչները, որոնք նրանց «Քեթևան» կալվածքը կապալով մշակել էին երկար տարիներ։ Անդրկովկասյան կոմիսարիատի և սեյմի որոշումներից հետո գյուղացիներն այլևս չէին ցանկանում ընդունել կալվածատերերի իրավունքները, բաժանել էին նրանց վարելահողերը, անվճար օգտագործում էին արոտավայրերը և օգտվում անտառներից։ Իշխանությունները ստիպված էին հաշտվել ստեղծված վիճակի հետ և ճանաչել գյուղացիների ժամանակավոր իրավունքը վարելահողերի նկատմամբ՝ մինչև դրանց ընդունումը կձևակերպվեր հողային կոմիտեների կողմից, այսինքն կմտցվեին պետական հողային ֆոնդի մեջ։ Պայքարը դրանով, իհարկե, չդադարեց։ Գյուղացիները գրավեցին նաև ջրաղացը և կալվածքի այլ մասեր, որ մնացել էին Խանաղյաններին սեյմի օրենքի համաձայն[60]։

Նոր հարձակումներ կատարվեցին Ֆոն Կուչենբախի և Ֆոն Գոտլիբի գյուղատնտեսական ձեռնարկությունների վրա։ Երկրամասային հողային կոմիտեի 1918 թ. մարտի 15-ի զեկույցում, թերևս չափազանցված, այսպես է ներկայացվում պատկերը. «Ավերվել են համարյա բոլոր պանրամշակման գործարանները, հափշտակվել է գործարանների գույքը, քշվել— տարվել են ցեղական և տեղական անասունները, խոտը մասամբ հրկիզվել է, մասամբ յուրացվել»[61]։ 1919 թ. Լորուտի գյուղացիները տիրել էին փոխգնդապետ Բաժբեուք-Մելիքովին և նրա քույրերին պատկանող «Խոջիկ» կալվածքին, այնտեղ ցանք էին կատարել, հնձել խոտը[62]։ 1920 թ. սեպտեմբերի 13-ին Լոռու շրջանի ան-

---

56 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1977, № 2, էջ 10։

57 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 11, էջ 93։

58 Տե՛ս «Великая Октябрьская социалистическая революция...», с. 190—191.

59 Տե՛ս ЦГИА Груз.ССР, ф. 1913, оп. 1, д. 11, л. 1, 3.

60 Տե՛ս «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը)։ Նյութեր և փաստաթղթեր», Երևան, 1932, էջ 93, 96։ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, № 2, էջ 11—12, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 21, թ. 8, գ. 515, թ. 5։

61 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան...», էջ 196—197։

62 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 203, ց. 1, գ. 753, թ. 35։

տառապետը գյուղատնտեսության և պետական գույքերի նախարարության հայտնում էր, որ Մարց, Լորուտ, Շամուտ և Աթան գյուղերի գյուղացիները սեփականացրել են Մարցի ամբողջ կալվածքը՝ նրա ինչպես կալվածատիրական (թավադական), այնպես էլ վանքապատկան մասերը և արդեն երկու տարի է ոչ մի տուրք չեն վճարում[63]։

1919 թ. գարնանը Պողոսքիլիսա գյուղի բնակիչները գրավել էին Դիլիջանում գտնվող Իլյա Ճավճավաձեի կալվածքը, որն ուներ վարելահողեր, այգի և պետությունից վարձակալած անտառներ, 232 դեսյատին տարածությամբ։ Նրանք ցանք էին կատարել, արածացնում էին իրենց անասունները, անարգել օգտվում կալվածքի ճանապարհներից և Աղստաֆա գետի կամուրջից[64]։ 1920 թ. Երևանի գավառի Ավդալլար գյուղի բնակիչները գրավել և բաժանել էին Աննա Ղորղանյանի հողերը (60 դեսյատին)[65]։ Էլարի գյուղացիները սեփականացրել էին Մադաթյանների «Եղուն-արխ» կալվածքը (Աղամալ Մելիք-Աղամալյանի նախկին կալվածքի մասը)[66]։ Բաշ-Գյառնի և Գողթ գյուղերի գյուղացիները, ինչպես գրել է Գեղարդի վանքի վանահայրը, «ըմբոստացած սկսել են վանքի պատկանյալ հողերը տիրապետել և բաժանել իրենց մեջ նաֆարների վրա»։ Այդ հողերը աճուրդով վարձակալել էին մի քանի ունևոր-կուլակային տնտեսություններ[67]։

1919 թ. գյուղացիները յուրացրել էին Կարակալայի պետական (նախկին ուդելային) կալվածքի ունեցվածքը, Եգոր Բեժանյանի (Լոռու Սադիբագդի գյուղից) վարձակալած պետական ամառանոցավայրը Քոլագիրան երկաթուղային կայարանի մոտ[68]։ 1920 թ. Ալեքսանդրապոլի գավառի 4-րդ շրջանում Քյալալի գյուղի հողազուրկները խլել էին կապալառու Արտաշես Գասպարյանի հողերը[69]։ «Ինձ հասած տեղեկություններից երևում է,— ասված է նույն գավառի 5-րդ շրջանի պետական գույքերի կառավարչի կողմից Խլի Ղարաքիլիսա գյուղի կոմիսարին ուղղված գրության մեջ,— որ «Ջելաբ-Քեչութ» կոչված պետական հողաբաժինը առանց արենգով վերցնելու ինչ-որ գյուղացիք վարում են»[70]։ Ղայղուլի-Ղագանչիի գյուղացիները տիրել էին «Ֆինտոս» հողամասին։ 4-րդ շրջանում գյուղացիները գրավել էին կապալով տրված «Ղզըլ-Քիլիսա» պետական հասութաբեր հողվածը։ Թափանլի, Արչուտ և Դարբաս գյուղերի բնակիչները, որ վարձակալել էին «Զոլաբար» կոչվող յայլաղները, հրաժարվում էին մուծել կապալավարձը[71] և այլն։

Վերը նշվեց այն մասին, որ կալվածատիրական, այժմ ավելացնենք, նաև պետական հողերի կապալառուների մեջ քիչ չէին ունևոր-կուլակային տնտեսությունները, որոնք իրենց հերթին զբաղվում էին նաև ենթավարձակալությամբ, ավելի սաստկացնելով չքավոր գյուղացիության շահագործումը։ Այժմ բերենք մի քանի նոր տվյալներ դասակարգային պայքարի մասին։

Թազաքենդ գյուղում կուլակներ Մկրտիչ Հովհաննիսյանը և Ստեփան Մելքոնյանը հասարակական հողերից զավթել էին 30 խալվար տարածությամբ վարելահող, որտեղ ցանք էին կատարում մշտական վարձու բատրակների միջոցով։ Փետրվարյան հեղափոխությունից հետո գյուղացիները որոշեցին տիրել իրենց նախկին հողերին, սակայն հանդիպեցին կուլակների դիմադրությանը։ Գյուղացիները ստիպված հրդեհեցին հողերում կառուցված տները՝ հողամշակներին այնտեղից հեռացնելու համար։ Այնուհետև տեղի ունեցավ ընդհարում

63 Տե՛ս նույն տեղում, գ. 672, թ. 85—85 հակ.։

64 Տե՛ս նույն տեղում, ֆ. 203, ց. 1, գ. 694, թ. 21—21 հակ., 23 և գ. 701, թ. 25—26։

65 Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 132, թ. 230։

66 Տե՛ս նույն տեղում, ֆ. 72, ց. 1, գ. 30, թ. 1—2։

67 Նույն տեղում, ֆ. 56, ց. 6, գ. 1199, թ. 1։

68 Տե՛ս նույն տեղում, ֆ. 203, ց. 1, գ. 170, թ. 3 և գ. 605, թ. 193—193 հակ.։

69 Տե՛ս «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները...», էջ 100։

70 Նույն տեղում։

71 Տե՛ս նույն տեղում, էջ 100—101։

երկու կողմերի միջև, ընդ որում կուլակները օգտագործեցին նաև զենք, որի հետևանքով զոհվեցին Խաչատուր Եդիգարյանը և կուլակ Մկրտիչ Հովհաննիսյանը[72]։

Դաշնակցականների տիրապետության տարիներին աշխատավոր գյուղացիության վիճակն էլ ավելի ծանրացավ։ Հողը ավելի ու ավելի էր կենտրոնանում կուլակների և ունևորների ձեռքում։ Սովից փրկություն որոնողները ամենաչնչին գներով ծախում էին ցանքը, հողը և այգին կամ դեռևս դրանց չհասունացած բերքը։ Այսպիսի պայմաններում ուժեղացավ գյուղացիության պայքարը հողի ներքին վերաբաժանության, ինչպես նաև միջգյուղային վեճերի լուծման համար։ Դաշնակցականների կառավարությունն ընդհանրապես չէր շտապում լուծել հողային հարցը՝ իրականացնել Անդրկովկասյան կոմիսարիատի և սեյմի ընդունած ռեֆորմը։ Կառավարությունն այն կապում էր պետության սահմանների հարցի հետ։ Հողաբաժանության հարցում ևս, որը հողային հարցի մասն էր կազմում, նա ուներ նույն վերաբերմունքը։ Այնուամենայնիվ գյուղում ծավալված պայքարը և դժգոհությունները մեղմելու համար նա երբեմն ստիպված էր ընդառաջել գյուղացիության պահանջներին։ Սակայն դժգոհությունները չէին վերանում, որովհետև հողաբաժանությունից ևս շահում էին զորքաները։ Այլ կերպ չէր էլ կարող լինել. շահագործողների պետությունը պետք է պաշտպաներ շահագործողների շահերը։

Էջմիածնի գավառի Աղավնատուն գյուղի ներկայացուցիչները դաշնակցականների կուսակցության շրջանային կոմիտեին գրում էին, որ գյուղի հողերի մեկ երրորդը գտնվում է մի քանի վաշխառուների ձեռքում և խնդրում էին միջնորդել կառավարության առաջ՝ կատարելու հողաբաժանություն[73]։ Մեկ ամիս անց հետևում է գյուղի երկրորդ դիմումը, ուր ասված է. «Ամբողջ գյուղի հողերը 7—8 մարդու ձեռքում են։ Մի՞թե ցարի օրենքն է։ Խնդրում ենք օրինավոր, ճանապարհով և արդարադատությամբ կարգադրեք վերջ տալու այդ ցավոտ (հողային)հարցին, որը կարող է պատճառ դառնալ շատ սպանություններիս»[74]։ Հողաբաժանության սուր պահանջի մասին է արձանագրել Նոր Բայազետի և Դարալագյազի գավառներ մեկնած պառլամենտական հանձնաժողովը։ Նոր Բայազետի գավառի ամենացավոտ հարցերից է հողային հարցը, նշել է հանձնաժողովը։ Այստեղ հողը կենտրոնացել էր մի քանի հարուստների ձեռքում, որոնք արգելակում էին կատարելու նոր վերաբաժանություն (վերջինը եղել էր 1890-ական թվականներին)։ «Հողաբաժանության և հողային խնդրի շուրջը Նոր Բայազետի գավառում,— ասված է զեկուցագրում,— տեղի են ունեցել ահագին կռիվներ ու խռովություններ»։ Սևանի և Դարաչիչագի շրջաններում երկրագործության և պետական գույքերի նախարարության կատարած ստուգումները պարզել էին հողաբաժանության ժամանակ թույլ տրված բազմաթիվ զեղծարարություններ ու չարաշահումներ և, իհարկե, երկրաչափի կաշառակերության փաստը։ Հողային խնդիրը ավելի էր խճճվել։ Սակավահողության մեջ տառապող Ցամաքաբերդի, Գոմաձորի, Օրդաքլուի, Մաքրավանքի, Ալափարսի, Ռընռամալի, Վերին և Ներքին Քաղսիների դրությունը ոչնչով չէր փոխվել, ընդհակառակը, ավելի էր վատացել, արձանագրել է հանձնաժողովը 1920 թ. հունիսի 26-ին նախարարությանը ներկայացրած զեկուցագրում[75]։

Հողային հարցը սուր էր հատկապես Էջմիածնի գավառում, ուր բացի տեղական հողազուրկ ու սակավահող գյուղացիներից, կուտակվել էին մեծաթիվ արևմտահայ գաղթականներ։ Գավառի համայնական (զեմսավային) վարչությունը 1920 թ. ապրիլի 24-ին ներքին գործերի նախարարին գրել է. «Այժմ շատ ուժեղ և սուր բնավորություն է ստացել ժողովրդի մեջ հողաբաժանության խնդիրը... Ամեն օր Վաղարշապատ են թափվում հարյուրավոր գյուղացիներ,

72 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 103. ց. 1, գ. 30, թ, 1—3, 29—31։

73 Տե՛ս նույն տեղում, ֆ. 214, ց. 1, գ. 5, թ. 50։

74 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1970, № 2, էջ 73։

75 Տե՛ս նույն տեղում, ֆ. 203, ց. 1, գ. 122, թ. 126—132։

որոնք ասում են. «Հողային հարցը մենք դժվարանում ենք որոշել, եկեք տեղնուտեղը տեսեք, քննեք ու որոշեք, թե չէ մենք ստիպված պիտի լինենք «մեր եղանակով՝ հեղափոխական ճանապարհով վճռելու այդ հարցը»[76]։

1920 թ. մայիսյան հերոսական ապստամբությունը ցույց տվեց, որ գյուղացիությունն իսկապես տրամադրված է հեղափոխականորեն և մասնակցում է բուրժուական կարգերի տապալման, սովետական իշխանության հաստատման համար պայքարին։ 1920 թ. մայիսի 26-ին քննարկելով «ներքին վերջին դեպքերի պատճառների ուսումնասիրության և լուսաբանության մասին» հարցը, նախարարների խորհուրդը գյուղատնտեսության և պետական գույքերի նախարար Ս. Վրացյանին հանձնարարեց ներկայացնել արտակարգ քննիչ հանձնաժողովի կանոնադրություն[77]։ Հաջորդ օրվա նիստում քննարկվեց կանոնադրության մասին զեկուցումը[78], իսկ մայիսի 31-ին Ս. Վրացյանը ստորագրեց հողային հատուկ մարմինների մասին օրինագծի բացատրագիրը։ Հողային հարցը, գրել է Ս. Վրացյանը, ունի ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական խոշոր նշանակություն։ Մայիսյան շարժումները ցույց տվեցին, որ «գյուղացիությունը հեշտությամբ պրովակացիայի ենթարկվեց գլխավորապես հողային խնդրի պատճառով»։ Հողային հարցի վերջնական լուծումը վերապահելով ապագային, Ս. Վրացյանը գտնում էր, որ անմիջապես հարկավոր է լուծել երկու անհետաձգելի հարց՝ պետականացնել բոլոր հողերը և պետական ֆոնդի հաշվին բավարարել սակավահող գյուղացիությանը։ Քանի որ հողային կոմիտեները անընդունակ գտնվեցին արագորեն կարգավորելու հարցը, նա առաջարկում էր դրանք փոխարինել հողային հատուկ մարմիններով[79]։ Հունիսի 4-ին նախարարների խորհուրդը հաստատեց հողային հատուկ մարմիններին մասին օրինագիծը, որոնց վրա դրվեց սեղմ ժամկետ (մինչև հոկտեմբերի 1-ը) իրենց խնդիրը կատարելու համար[80]։ Դրանով դաշնակցականների կառավարությունը գործնական խնդիր էր դարձնում իր կուսակցական ծրագրի կատարումը (էսէռական սոցիալիզացիա)։ Նախատեսված ժամկետում կառավարությունը զբաղված էր ոչ այնքան հողային ռեֆորմի կենսագործումով, որքան Մայիսյան ապստամբության ղեկավարների ու մասնակիցների հետ հաշվեհարդար տեսնելով։ Ըստ էության Հայաստանի բուրժուական պետությունը, որի գլուխ կանգնած էր իրեն սոցիալիստական հորջորջող կուսակցությունը, չկատարեց նույնիսկ բուրժուական հեղափոխության խնդիրները։ Ժամանակավոր բուրժուական կառավարության նման դաշնակների իշխանությունը հողային հարցը չլուծեց և այն լուծեց սոցիալիստական հեղափոխությունը՝ Հայաստանի սովետական իշխանությունը, որի հաղթանակի համար բանվորների հետ միասին կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պայքարել էր նաև աշխատավոր գյուղացիությունը։

БОРЬБА КРЕСТЬЯНСТВА АРМЕНИИ ЗА ЗЕМЛЮ В 1917—1920 гг.

ВЛАДИМИР КАЗАХЕЦЯН

Резюме

Накануне Великой Октябрьской социалистической революции, а также после ее победы трудовое крестьянство Армении развернуло борьбу за ликвидацию помещичьего землевладения и кулацкого многоземелья, за передел земли. Несмотря на ограниченное распространение крупного землевладения, тем не менее почти все помещичьи хозяйства

76 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, № 2, էջ 16։
77 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 206, ց. 1, գ. 112, թ. 97։
78 Տե՛ս նույն տեղում, թ. 99։
79 Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 140, թ. 75։
80 Տե՛ս նույն տեղում, թ. 71։

и государственные доходные статьи (Арзакянд—Даллар, Кетеван, Ахтала—Ахпат, Каракала, Шангирей, Араздаян, сыроваренные заводы и т. д.) захватывались крестьянами. Борьба в большинстве случаев носила стихийный, неорганизованный характер. Сравнительно организованно она шла в Лорийском уезде. Ни буржуазное Временное правительство, ни Закавказский комиссариат и сейм, ни правительство дашнаков, защищая интересы имущих классов, не решили земельного вопроса. Этот вопрос, касающийся буржуазной революции, был разрешен только Советской властью, за победу которой боролись и трудящиеся массы армянского села. Борьба за землю стала составной частью борьбы за новую, народную власть в 1917—1920 гг.